




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

L-96



343/33

44-160

ԱՇՈՏ ԼՈՒՍԵՆՑ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՐԻԿԱԴՆԵՐՈՒՄ



ԽՆԶՄ ԺՈՂՈՎ. ԿԵՆՏՐ. ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1 9 3 1 ՂՈՍՏՈՒԴՈՎ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյով.—Սոցիալիստական շինարարության նոր եռագլ 6 հ
2. Կուրբեյկո.—Կուլակի կոլտոզի թշնամի 5 »
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 »
4. Սալիկ.—Պատասխան ընկեր կոլտոզներին 5 »
5. Մ. Գիգոյան.—Կոլտոզների մասին 6 »
6. Վ. Իվանով.—Նոր եռագլով 5 »
7. Գյուղատնտեսական արտիկ կանոնադրություն 2 »
8. Կնոջ աշխատանքը կոլտոզում 8 »
9. Ա. Անդրեյով.—Հյուս. կովկ. գյուղատնտեսության սոցվերակա
առցման խնդիրները 2 »
10. Կալենին.—Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսու
թյունը կոլտոզներում 3 »
11. Ա. Անդր.—Սոցիալիստական շինարարության գոտում 8 »
12. Հյուս. կով. Յերկո. ծխախոտագործական միության ղիմումը 2 »
13. Հե(ք)ի Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի ղեկավարումը) 15 »
14. Ա. Հովհաննիսյան. յերգ մարտական փորձի (բանաստեղծու
թյուններ) 20 »
15. Հյուս. կով. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի րանաձևերը 8 »
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլտոզներում 15 »
17. Յեգիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 »
18. Միկուլա.—Դեպի նոր կենցաղը կոլտոզներում 5 »
19. Սկոմարով.—Պաշտպանեցեք անասուններին վարակումից 5 »
20. Դուլգուսկի.—Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կեն
դաններին 6 »
21. Հնդամյակի յերրորդ տարվա շեմին 16 »
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և գ. տ. սոց. վերա
կառուցումը 10 »
23. Յա. Տեկով.—Ինչպես կազմակերպել խոշոր կոլտոզի տնա
սությունը և նրա վարչությունը, 1-ին պրոկ 8 »
24. Նույնը, 2-րդ պրակ 4 »
25. Նույնը 3-րդ պրակ 7 »
26. Ս. Դ. Բասալուցյան.—Անասնաբուծական կոլտոզի և նրա
մասնաճյուղերի կառավարումը 20 »

Արմ.

2-33492


891.99

L-96

ԱՇՈՏ ԼՈՒՍՆԵՅ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՐԻԿԱԴՆԵՐՈՒՄ

ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



МНВ. № 20490

ԽՆԿՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԾՈՍԿԱԿ

1931 թ.

ԲՈՍՏՈՎ-ԴՈՆ

2-33492

44-160
16 NOV 201

03 MAY 2013


33505

АШОТ ЛУСЕНЦ

На баррикадах строительства

СТИХИ

На армянском языке



Центр. издательство народов СССР

Ресг в н-Д Крайлит № 3-2 заказ № 897 Газетно книжн. тип.
СКК 10 тираж 2000



ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1910 թ. Աղբրեջանի Արեշի գավառակի Հա-
վարիկ գյուղում: Գյուղում ծնողներն պարապում էին հո-
ղագործությամբ: 1918 թ. Հավարիկ գյուղից գաղթում են
Հյուսիսային Կովկաս (Արմավիր): Արմավիրում ծնողներն
սկսեցին պարապել բանվորությամբ: 1924 թ. հեռու հայրս

ծերանալու պատճառով դառնում է գործի անընդունակ։
Մայրս մինչև հիմա յեւ աշխատում եւ տեքստիլ գործարանի
բանվորուհի յե (ջուլհակուհի)։

Սկսել եմ թուրքել 1920 թվականից։ Ավարտել եմ Հ.
Կ. Հայկ. Մանկավարժական Տեխնիկումը 1928-29 ուս. տա-
րում։ Մի տարի յե, վոր Արմավիրում վարում եմ ուսուց-
չական պաշտոն։ Այս ուսումն. տարում (1930-31 թ.) պետք
է աշխատեմ գյուղում։

Սկսել եմ գրել 1924 թ.։ Անդրանիկ վոտանավորս
նվիրված է յեղել ընկ. Լենինի հիշատակին։

Կոմյեթիստիկության մեջ եմ 1928 թվից։

ԿՆՌՈՒՅՈՂԱԿՆ

Աճում ե յերկիրը մեր,
Խնչպես մի կանաչ անտառ.
Յերեկ նա մանուկ եր դեռ,
Այսոր՝ պատանի պայծառ։

Յերկրի դաշտերում անծիր,
Սունկից ել արագ, հաջող՝
Բանում են կարծես գետնից
Անթիվ քաղաքներ աճող։

Ջրանցք ենք փորել կրկին
Ու հունն ենք փոխել գետի.
Դաշտի թավիշն շապկին
Կապել ենք արծաթ գոտի։

Զարկող քունգից դողում,
Դմբում է տունեղն աշնպես.
Միջոփն ել կարծես սողուն,
Ռեկսերը զնգում են վես։

Անքուն շահներն ուժգին
Ճչում են, կանչում, վիճում,

Նորերն ել այդ տաք վեճին
Ձայներն են խառնում հնչուն:

Յեռում ե գյուղում հիմա
Չեղած կոլեկտիվ մի կյանք.
Տրակտորը քշող Սիման
Զգում ե ինչքան բերկրանք:

Ծեր հինն ել դժգոհ հառնել՝
Փրփուր ե հանում, շառաչ,
Կանգնում ե վորպես պատնեշ
Անդուլ մեր վազքի առաջ:

Ինչ սար ել կանգնի ու պատ,
Այս թափը սանձել ուզի.
Նոր ուժը թրով պողպատ
Ճեղքում ու շաչում ե զիլ:

Այս վեհ կառուցման պահին
Չպետք ե յերբեք հոգնես.
Դադարը՝ հատուկ մահին
Հողի տակ մի որ կառնես:

Մեր կյանքը հնոց ե հուր,
Յերկաթն ե հալում ձյան պես—
Քարից ել պիտի ամուր,
Սրից ել հատու լինես:

Մտի՛ր քայլերով վորոշ
Մեր կյանքը հրով լեցուն,
Ու սիրտդ վորպես դրոշ
Վառիր պայքարի բոցում:
Մտքով, մկանով, սրտով

Ձուլվիր հոսանքին հսկա,
Ծովի հետ շարժվիր թափով,
Կաթիլն ես ո, դու նրա

Բազուկդ շարժիր հրում,
Թող միտքդ վարի ներկան,
Վոր մեր գյուղաստան յերկրում
Յելնի Սեմաշտարոյ հսկան:

Տոկա ձորերում մթնած,
Վոր վոնց մի արև լուսե՛
Կիրճից, ժայռերից յելած
Շողա Չորագետը սեգ:

1930 թ.

ՅԵՐԳԻ ԴՈՆԻ ՄԱՍԻՆ

Լաջն ու արձակ այն դաշտերով, այն դաշտերով լաջն ու
 արձակ—
 Հոսում ես, Դոն, միշտ մեղմահոս՝ դանդաղ, հանդարտ ու
 անկարկաչ,
 Վտակներով, առուններով ստեպների դեմքը ցանցած՝
 Ժպտում ես դու հեռուներին, հեռուներին կապտակաճաշ:

Քո ափերին կանաչապատ քաղաքներ են փովել անթիվ,
 Գյուղեր անթիվ ու անհամար ճիչից զարթնող հուր յերկաթի,
 Ու Ռոստովը կանգնած համառ մեծ հանգուցում ճամբաների՝
 Վոնց ղեկավար հրահանգում է քաղաքներին ու գյուղերին:

Քո ափերին բուրլակները առավոտից մինչ իրիկուն՝
 Նավակները բեռնավորված քաշում են միշտ բազկով ճկուն.
 Յեվ մերթ ընդ մերթ յերգ են յերգում՝ բուրլակներին
 կանայք խմբված,
 Յեվ մերթ ընդ մերթ յերգ են յերգում՝ խինդ ու ծիծաղ
 իրար խառնած:

Քո ափերին մեծ զավոդներ, գործարաններ յերկինք մեխվող՝
 Ճշում են գոռ խրոխտ ձայնով՝ աղաղակով, ուժգին թափով.
 Ու յեխում են նոր զավոդներ ձայնակցելով նրանց ճիչին
 Ու դեռ քանի՜ նոր շէակներ պիտի հնչեն քո ալանջին:

Քո ափերին՝ հովիտներում ու դաշտերում կանաչ ովկյան—
 Ժիր կոլխոզնիկ հողն է վարում՝ կամքով արի ու առնական,
 Ժիր կոլխոզնիկ հողն է վարում՝ յերգ է յերգում միշտ
 հաղթական,
 Յեվ տրակտորի ղեկը բռնած, հիմա դիտե բախտն իր վաղվան:

Հսկա հավեր ջուր ճեղքելով անց են կենում շտապ, անաչ,

Լող են տալիս արագընթաց՝ ու չեն ուզում կորցնել մի պահ.
 Հասկացել են կարծես նրանք որերը մեր հրդեհավառ,
 Հասկացել են, վոր կյանքը այս արշավ է մի վաղվա համար:

Յեվ կանալք ենք փորում ահա սրտով վառված ու ժրաջան,
 Շուտով շուտով ընկեր դարձած ձեռք կմեկնի դեպ քեզ Վոլգան,
 Ու վողջույնին վողջույն տալով՝ առողջ, ջահել, կանգնած վտի,
 Ջրանցքների մեր լույս յերկրում դու կկապես մի նոր գոտի:

Յես քո պայծառ նայվածքի մեջ իմ մեծ յերկրի դեմքն եմ
 տեսնում,
 Նա յեւ այդպես միշտ խնդասիրտ, վառ տենչանքներ ունի
 ներսում:

Ո՞վ է ասում, թե ծովերը լաջն են քեզնից ու գեղեցիկ,
 Քեզնից եւ լաջն, քեզնից եւ վառ, ո՛ր, իմ յերկիր լուսե
 մասնիկ:

Ինչո՞ւ, ինչո՞ւ իմ աչքերին թվում ես դու վառ ու անգին —
 Այնտեղ, այնտեղ, այդ ափերիդ հաղթ բանվորը մուրճը
 ձեռքին

Իր այսորվա կյանքն է դարբնում, քարփիչներն է շարում
 վաղվա,

Ու կոլխոզնիկն զարթնող գյուղում ելեկտրոլամպ վառում
 վառման:

Ահա ինչու իմ աչքերին ու իմ սրտին անուշ ես դու,
 Քո այսորվա կյանքն արեւմառ հիացմունք է տալիս մարդու.
 Ով չի տեսել քեզ, դուրթիչ Դոն, կհիանա յերբ վոր տեսնի,
 Ով տեսել է մի որ առաջ, կգարմանա այսոր տեսնի:

1927 թ.

Ա Կ Ո Ւ Մ Բ Ը

Իրիկնային ժամին, յերբ մուկն ե իջնում,
Վառում ե ակումբն այն աչքերն իր վառ, ալհուր,
Ու ժպտում ե հրկեղ, ո, մեզ այնպես հուրհուր,
Կարծես մեր մայրիկն ե, իր գիրկն ե կանչում:
Յեվ մենք հուզված, վառված, վոնց առկայծող քուրա,
Խնդում, վաղում, թռչում, ընկնում ենք գիրկն ուրախ:

Այնտեղ դարձնում ենք մենք, վորպես դարձնոցում,
Մեր միտքն ու կամքն ահեղ... ընթերցում ենք թերթեր:
Միում ենք լենինի հատորները թերթեր,
Պողպատ մտքեր հալել ուղեղի հնոցում.
Ու միշտ համառ թափով, մուրճի պես անդիշում,
Իրար հարց ենք տալիս, կարդում, խոսում, վիճում:

Այնտեղ մենք լուծում ենք հրատապ հարցեր
Յեվ ժողովներ անում ե լում գեկուցում,
Յեվ պարապմունք տանում՝ այն լուսավառ ծոցում
Յեվ կատարում, վարում ուրիշ բյուր գործեր.
Աշխատում ենք հաստատ, գարնան նման ջահել.
Կարող ե մեր աչքից մի հարց թեթե սահել:

Այնտեղ, միշտ պատերից սրտով քաջարի՝
Մեզ Ստալինն ե նայում բերկրանքով ամրակամ,
Մեզ Իլիչն ե ժպտում աչքերով խորիմաստ,
Կալինինն ե նայում՝ հանգիստ ու բարի...
Միշտ նրանց հայացքում տեսնում ենք պարզ, վորոշ
Պարզած վաղվա կովի հաղթանակի դրոշ:

Այնտեղ, մյուս սենյակում, ուր խաղում են խաղ,
Մեր կամքի հրահանգով շախմատում ե շաշկան,

Մեր ուղեղն ե գործում, աշխատում մաքրական,
Շարժում ե շախմատը՝ լուռ, ծանր, դանդաղ.
Յեվ խաղերն այն լցված, համակված պայքարով՝
Միշտ կերտում են մեր մեջ ուժեղ կամք ու կորով:

Իսկ գրական սենյակում, վոնց ներս ընկերներ,
Հավաքվում ենք, խմբվում, ուրախ շրջան կազմում,
Մեր կոշտ ձեռքերից յեւած գրվածքները կարդում,
Կարդում, քննադատում ինչքան հաղթ յերգեր.—
Յերգեր ե սեգ ե կուռ, բայց վոչ խղճուկ ու սին,
Այս մեր պայծառ դարի լուսե կյանքի մասին:

Նրան վոնց չսիրենք, չասենք գեղեցիկ,
Միշտ դաշնամուրն այնտեղ խոր մուգիկ ե հնչում,
Իսկ մենք պարում, յերգում, գվարթագին շնչում,
Ինչպես մենք չլինենք անչափ յերջանիկ:
Լավ ե, լավ ե այնտեղ, լայնում ե սիրտդ ազատ,
Ակումբը դպրոցն ե, մեր տունն ե հարազատ:

Յեվ յեթե մեզ մի ուր մեկն ասի, հարց տա,
Ո՞վ ե շենքն այս շքեղ խինդ ու յերգով վառել,
Ո՞վ ե շենքն այս շքեղ այսպես գուռ կառուցել,
Նա իսկույն մեր աչքի կրակը կզգա.—
Ամեն մեկիս դեմքին կարող ե կարդալ, տեսնել—
Այս՝ յես եմ, ընկերս ե, այս յեղբայրս ե շինել:

1927 թ.

Բ Ա Յ Ի Կ Ը

Գրած քո բացիկը

Այսօր յես ստացա.

Սկզբի հենց տողից մի

Յրտով բարձրացա:

Դրում ես — «Ուրախ եմք,

Ծաղկում ե լոռին,

Վշտ ալ ալն Դերեզը

Կանչում ե ուժգին:

Իշխում ե ձորակը

Մի լույս հիդրոշեն,

Թափում, լուռ ծմակներ

Քանդվում են արդեն:

Ջարդվել ե արորը,

Արորն անխնդում,

Գութանն ու տրակտորը

Ջնդում են հանդում...»

Շարժված եր զրիչդ

Այնպես մարտական,

Վոր իմ սրտի մեջ ել

Վառվեց լույս կայան:

Ո՛ր, ինձ միենունյն ե,

Դոնում, թե լոռում—

Մի ճյուղ նոր բանելն ել

Մեծ խինդ ե բերում:

Գիտեմ քո սլապիկը

Տխրում ե սաստիկ,

Քանդվող ալն անտառը

Նբան ե մոտիկ:

Քանդեք, լուռ անտառն ել,

Ժայռերն ել ալն վեա,

Ցանցեք ճամբաները

Գծով բազմառելս:

Վոչի՜նչ, չքանա թող

Անտառն անարատ.

Բազմած կտեսներդ դուք

Չավողը հպարտ:

Յեկ յերբ անտառի տեղ

Չավող կանաչի—

Դժվար լոռեցին հին

Լոռի ճանաչի:

Այնքան հիդրոշենը

Վառ տենդ ձեզ բերի—

Անգամ պաղ ճյուղները

Հալչեն Լալվարի:

Այդ մութ ձորերի մեջ

Միշտ գայլն եր վոռում,

Հիմա թող մաշինը

Յերգի անդադրում...

Գարուն ե... ընկեր իմ—

Խնդա ու բերկրիք.

Չվարթ ե վերելքը

Ջահել մեր յերկրի:

Շատ կարճ երգրածդ,
Բայց խոր ու հաստատ,
Փոքրիկ բացիկիդ մեջ
Մեծ բան յես գտա...

Անդոր խոսքերով այս
Թղթի լոկ վրա
Վհնց վառ խնդությունս
Պատմեմ քեզ հիմա:

1928 թ.

ՔԱՂԱՔԻ ՅԵՐԿԸ

Հսկա դաշտին նախագահած, աղյուսե զգեստը հագին,
Գոռ-գոռ շենքեր պարզած հեռուն—հպարտանիստ ու արի.
Սուր ծխաններ վորպես սրեր զարկած լազուր յերկնքին,
Կանգնել ե նա լեռան նման իր հասակով վիթխարի:
Մշտաթրթիռ նրա սրտում հրաբուրբ ու վառման
Արշավում են ավտոները արագընթաց, հաղթական,
Դղրդում են թրամները—շոնդում են, հոնդում
Ու թռչելով վրադ, հապճեպ, մոտոցիկլետն աղմկում:

Բազմադադակ այդ ժխորին յեռանդն ե միշտ նախագահ,
Ջկա վռչինչ իզուր, անտենչ, աննպատակ ու անչափ.—
Զգում ես ջերմ, տեսնում ես վառ, ինչպես գարնան արեգակ.
Տեմպ ու տապ կա ամեն ինչում, ամեն ինչում վազք ու թափ:
Լաբիրինթոս փողոցների մայթերով լայն ու ասվալտ,
Կա մի շարժում անասելի—բազմատեսիլ մի նկար.
Միշտ շարժվում են մարդկանց խմբեր հորդ հորձանքով
անհանդարտ,
Միշտ ճշում են լրագրավաճառ ժիր տղաներ անդադար...

Ու շրջում են տարտամ քայլով զգեստավորված շատ անձեր,
Որորվում են, սեր շշնջում, անվերջ ծիծաղ ու բերկրանք.—
Անցողիկներին չի հմայում քայլվածքն այն նուրբ սիգածեմ,
Ուրիշ սեր ե նրանց գլուխում, ուրիշ քայլվածք, ուրիշ կյանք:
Խոթոռագեմ կայարանում մարդիկ խմբված ու անհերթ
Խոնավում են մուտքի մոտ և ձեռնոռնայն և բեռով,
Վոմանք իրար ձայն են տալիս, զանգն ե հնչում
մերթնդմերթ,

Գնացքներ են գնում գալիս խոր հեվիհե, սուր ճիչով:

Ակումբներում յեռում ե կյանք վոնց թափորում բազմահոծ,
 Ժողովներ են գնում հուզված ծովի նման ալեկոծ,
 Վորքան խոսքեր սուրսայր, անուշ, մեղք վառող գործի խանդ,
 Վորքան ծաղկուն վառ ժպիտներ, վորքան սրտեր ջերմյեռանդ:
 Զավողներում վառվող քուրա, շաշ ե, աղմուկ ու կրակ,
 Հաղթաշուտ բանվորները առավոտվա պես զվարթ
 Հուր մեքենան ընկեր դարձրած, աշխատանքը—նպատակ,
 Աշխատում են ու աշխատում, չկորցնելով ակնթարթ...

Հուզում ե միշտ սիրտը նրանց մեր վառ ներկան սավառնակ,
 Յեվ ամեն մեկն իր անիվի ուժգին յերգի ժամանակ
 Ընկերների ծով աչքերում տեսնում ե գոռ մի ալիք—
 Վաղվա կարկաչ ջրանցքները, լուսե յերկիրն այն դալիք:
 Ու յեղնում են արվարձանում նոր հաղթական զավոդներ,
 Բարձրանում են աղյուս-աղյուս կուռ շենքերի նոր պատեր:
 Շարում են միշտ վորմնադիրներ անհոգնելի, քաջարի,
 Գիտեն, շարած հիմք են դնում մի նոր, պայծառ աշխարհի:

Հին ժամերի դանգերը թույլ, ծուլ զողանջում են հիմա,
 Խանգարում են նրանց յերգին շշակների յերգն աճող,
 Վաղը, գիտեն, ել չի լավի ձայնն իրանց մեղմ, մերձիման,
 Ու կմեռնեն իրենք մենակ չունենալով ափսոսող:
 Յեվ քաղաքը մեծահսկա կանգնած հպարտ, առնական,
 Խրոխտախոս շշակներով յերգում ե վառ մեր ներկան,
 Ու նվագներ պողպատաձայն տարածելով իր չոր դին—
 Հեռու յերկրի վաղն ե տեսնում դալիքի այդ սեզ վորդին:
 1928 թ.

ՅԵՐԳ ԻՄ ՍԻՐԱԾ ԱՂԱԿԱՆ

Առույզ ես դու, արիական, մարտիկի պես աննկուն,
 Գարնան նման վառվոռն, խոսուն, խնդուն ծիծաղուն,
 Արշալույսից միշտ ժպտեղ, վերջալույսից գեղեցիկ—
 Յես քեզ ինչպե՞ս չսիրեմ, կոմյերիտունի հուր աղջիկ:

Յե՞րբ ես լինում դու ախուր, յե՞րբ ես դառնում հուսա՞ն
 Յե՞րբ ե բարդվում քո սրտին մի ախրություն հորդաւատ
 Միշտ տառն ես ժպտեղ, միշտ խոսում ես խնդաւիրտ,
 Յե՞րբ արեաւ քո դեմքից պակասում ե մի ժպիտ:

Վոնց վոր անկանդ մեքենա՝ միշտ բանում ես անվեհեր,
 Աշխատում ես հաղթական, արիական ու անահ,
 Միշտ խնդում ես անսպառ. խնդությունդ՝ սեզ սարեր,
 Վառ ծիծաղդ՝ շատրվան, դու խնդության նախագահ:

Աշխատանքի վառ ժամին, յերբ դու զվարթ հայացքով
 Ինձ ես ժպտում հրակեղ—ո՛հ, այնպես տապ, վոնց ամառ՝
 Կուրծքս ուռչում ե թափով, սիրտս լցվում յեռանդով,
 Ել ավելի ժրջան մուրճ եմ դարկում յես համառ:

Բաճկոն ունես դու հազիվ ծովի նման կապուտակ,
 Գլխիդ կապած մի կարմիր, արեաւալ թաշկինակ,
 Կրծքիդ կախած «Կիմ» նշան աստղիկի պես շողջողուն,
 Աստղիկի պես փողփողուն ու փալիլուն ու նաշխուն:

Մազեր ունես կիսահատ, գեղադանդուր, հրահրուն,
 Վոլխովսարոյի լուսավառ ջրվեժի պես վոլորուն,
 Խոշոր աչքեր հրկիզող, վառող, այրող մի կրակ,
 Գիշերային խավարում հլեքտրական զուլյգ ճրագ:

Դու չգիտես կոտրովել, ծանր ծախել ու նագել,



Պարել ճկուն նուրբ պարեր՝ ֆոկսորոտ կամ հնգելի,
Արասանել քնքշահեղ սիրո խոսքեր ու գագել,
Ու որորվել, շորորվել... ու դեռ ելի, դեռ ելի:

Ամեն, ամեն մի գիշեր դու միշտ նստում ես յերկար
Ու չես՝ քնում, չես քնում վորպես պահակն ամրոցում,
Կարողում, թերթում ես գրքեր, անդուլ, անվերջ, անդադար,
Թերթին գրում նոր նյութեր, պատրաստում նոր գեղեցում:

Վաղը կոխվ թե հնչի, հուրը խոսի բազմաձայն,
Պողպատն անեղ շառաչի, արձիճը բարձր յերգի՝
Դու առաջինը սրտոտ ձեռքդ կանոնս հրացան—
Ո՛ր, իմ ընկեր պայքարի, աշխատանքի ու կյանքի:

Ինձ հետ կելնես միասին, կհագնես մեծ կշի/կներ
Յեվ ուսերիդ կպցես զինվորական կոշտ շինել,
Ու կձա նես սրտագին—«Յելի՛ր, ջրոտ դասակարգ,
Տանենք պայքարը մեր մեծ դեպի վելջին հաղթանակ»:

Մարտիկի պես առույգ ես, արիակամ, աննկուն,
Գարնան նման վառվռուն, խոսուն, խնդուն, ծիծաղուն,
Անզալդարուն, բայց փալլուն դու մեր դարի գեղեցիկ,
Դու մի ուրիշ նոր սիրուն, կոմյերիտուն հուր աղջկ:

1928 թ.

ԱՂՈՒՂ ԱՍՈ

Շուրջը խմբած պառավ ու ծեր՝ գորշ որերի յերգն ես յերգում,
Մարտում ընկած գնդապետի վարդանման վերքն ես յերգում.
Արդեն վաղուց յերազ դառած սարսափելի այն հին յերկրում,
Անջուր, տոչոր, չորցած արտի լացով թրջված բերքն ես
յերգում:

Յերգում ես դու յերկիրն ալեր, վոքտեղ միայն հուրն եր
խոսում,
Ու հրդեհված տնակներէ սեվ պատերի մուրն եր խոսում,
Ու պերճախոս, վոնց հեռտոր, մառախլերն ու սուրն եր խոսում,
Ու քո անգուլթ յարից նվեր՝ դալուկ վարդի թերթն ես
յերգում:

Մեծ քաղաքի ձայներն անեղ տես, ողի մեծ մասն են բռնել,
Խանդարում են նվազ սազիդ, կարծես մի նոր սազ են բռնել,
Աշխատում են բարձր ճշալ, կարծես քեզ հետ բաս են բռնել.
Դու յել, կարծես, այդ համերգից ազատվելու յելքն ես
յերգում:

Ասում ես դու, թե կյանքն այս փուլն այն մեծ է, վոր դյուր
ե գալիս.

Մեկը խնդում, մյուսը լալիս, բյուրը գնում, բյուրն է գալիս,
Թե՛ ամենքս ել անցնելու յենք, թե՛ մարդ աշխարհ հյուրն է
գալիս,

Չես նկատում, աշուղ Ասո, վոր անցնելուդ հերթն ես յերգում:

Ո՞վ է լսում յերգդ տխուր—մեռնող սրտի լացն է միայն.
Լսում է նա, ում սիրալ միշտ աշնան նման թացն է միայն,
Ում սիրալ միշտ մահվան հանդեպ ծաղկի նման բաց
ե միայն.—

Ի՞նչ ես բերել նոր սերնդին. դաշնակցական յերթն ես յերգում:

Ո՛ր, կույր Աստ, դու չես կարող մեր որերի արևն յերգել,
 Քաղաքաթիւնդ մեր շարքերի հզոր կանչն ու բարեն յերգել,
 Գարնանագեղ մեր աշխարհի հենց մի կանաչ տերեւիլը
 յերգել։—

Դրա համար այդպես սրտով Հասան Ղալա բերդն ես յերգում։
 Քո տեղ, Աստ, նոր յերգիչներն ինչքան ժպտադիմ են յելել,
 Ձեն, ել հարցրել քո կամքն անգամ և պայքարով բեմ են յելել,
 Վառ, հրաշունչ, զվարթ յերգով լալուկ յերգիդ դեմ են յելել
 Ու սուր զրչով, առանց սաղի, մեր յերկրի վերելքն են
 յերգում։

1929 թ.

ԳԻԳԱՆՏԻ ՏՐԱԿՏՈՐԻՍՏՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Զնգուն տրակտորները շաչում են,
 Բանում են թափով համաչափ,
 Ամառ յեռանդով մի անչափ
 Զնգուն տրակտորները շաչում են։
 Շարք-շարք բանակի պես թռչում են,
 Հերկում են դաշտերը անափ,
 Զնգուն տրակտորները շաչում են,
 Բանում են թափով համաչափ։

Մաթոսը, Ալին ու Իվանը
 Փորձված տրակտորիստ են դառել,
 Քչում են մեղ հետ հմտորեն
 Մաթոսը, Ալին ու Իվանը։
 Մի հնչ է ախուր՝ յերեկվանը,
 Վառ խինդ աշտորվանն է վառել,
 Մաթոսը, Ալին ու Իվանը
 Փորձված տրակտորիստ են դառել։

Թռչեք, տրակտորներ, կրակի պես,
 Յերգեք սուր քամուց ել ուժգին,
 Կանչեք, փնչացեք խնդադին,
 Անցեք աննահանջ բանակի պես։

Արեւ վերից մեղ ժպտում է
 Մազերն իր հուր-հուր, թափելով,
 Խանձված մեր դեմքին խաղալով
 Արեւ վերից մեղ ժպտում է։
 Գետնից գոլորշին բարձրանում է՝
 Վոնց ծուխը թեթև, անխռով,

Արևը վերից մեզ ժպտում է
Մազերն իր հուր հուր՝ թափելով:

Մեզ հետ ել քրտնել է Բարսեղը...
Գրտինքը շաղի պես ճակատից
Թափվում է վարդի փուռն ալյուրին,
Մեզ հետ ել քրտնել է Բարսեղը:
Անուշ է թվում շող ասեղը
Ընկնող վարդապուշյն մեր ալյուրին,
Մեր հետ ել քրտնել է Բարսեղը,
Գրտինքը թափվում է գետին:

Փայլուն տրակտորներ, ձեր կողերը,
Վոր թողն է պատել վողջ որվա,
Մեր տաք քրտնքով կլվանք,
Շաչեք ու անցեք այս հողերը:

Հնին հարվածելն այս ժամին է,
Խփում է մեր կամքն ահարկու,
Զարկվում են կողմերը՝ յերկու,
Հնին հարվածելն այս ժամին է:
Թմբերը, կարծես թշնամին է,
Ընկնում ու դգվում են խկույն,
Հնին հարվածելն այս ժամին է,
Խփում է մեր կամքն ահարկու:

Ինչքան է վարածը, ինչքան է...
Ինչքան էլ կանցնենք մենք շուտով,
Ուժգին կռիվով մեր կամքով
Ինչքան է վարածը, ինչքան է,
Հուզող խնդուն այս ներկան է,
Գալիքն էլ կգա վառ ժպտով:

Ինչքան է վարածը, ինչքան է,
Ինչքան էլ կանցնենք մենք շուտով...

Հնչեք, տրակտորներ, ո, հուզիչ է
Ձեր յերգը շաչող, անդադրում,
Համերգն այդ մեզ խնդ է բերում,
Այդ յերգն առնական մի մուզիկ է:

1930 թ.

ԽՆԴՈՒՆ ԱՌԱՎՈՏ

Ինչ քաղցր են, ինչ քաղցր են յերգում շշակները,
Զարթնել ես քնիցդ ինչ թափում ու գլարթ,
Արևը չեղած դեռ սկսվել է համերգը,
Ի՞նչ մոտ է կանչում քեզ ընկեր—մեքենադ:

Յեվ յերբ վոր համերգն այդ փակում է իր մասը,
Հսկա դարբասները բացվում են արագ,
Ու բանվորական մեր թողած թաղամասը
Բրոնզե քայլերով, տես, գալիս են նրանք:

Ամեն մեկն արագ է փոխում իր վոտը,
Քամու պես վռադ են, գնում են դործի.
Սրտումդ նոր խինդ է բացել առավոտը
Ու դու ամենքի հետ յելել ես փորձի:

Հնչում է սուր փողը, խփում են թմբուկը,
Քայլում պիոներները նրանց ունկնդիր.
Այնպես գեղունի են, վրնց ցուլց է, արիքուն է՝
Արևն ել յելնում է պարադ ընդունի:

Սկսեց շոգադացնել տենդով աշխատելը,
Անվերջ տփափում է ուժգին ու հատու.
Դպրոց են վազում այն փոքրիկ մանուկները,
Ծաղկի պես բացված ու ժպտուն:

Ահա վորո՞նք ադիրն ել պատերը շարում ե...
Աճում է հասակը յելնուլ քաղաքի.
Կարծես թե ծառերը այստեղ փոքրանում են,
Վերձիգ բարդիներն ել իջնում են աչքիդ:
Ավտոն արշավում ե... ու ծուխն առու յե,

Խնդուն այն սուլոցը հուզիչ է սրտիդ.
Սայլերն ուրբովում են... կայանը հեռու յե...
Ձիյերը տխրում են սաստիկ:

Ինչ բարձր է, ինչ սուր է թռչում սավառնակը,
Կարծես թե կայծակն է ամպերը ճեղքում,
Ո, մեկ չե, յերկուս չե, հառնել է քառյակը,
Շոինդը ականջ է ծակում...

...Նորից վողջ քաղաքը քուրա յե, բոցուն է,
Աղմուկը մուղիկ է հյուսում բազմադան.
Ամեն տեղ մի վազք է, արշավ է, մրցում է,
Վտաքիդ տակի հողը շարժվում է անգամ:

1929 թ.

ԱՆՃԱՆՈՒԹՆԵՐ

Յեվ տրամվայն ինչպես միշտ, սլանում ես սաստիկ,
Յանելով յերգի պես մի շոխող խնդաղին.

Յերբ կանգնում ես, յեղնում ու իջնում մարդիկ,
Ու նորից արշավում, հռնդում ես կրկին:

Կանգառմանն ել յեղնում ես ահա մի որիորդ,
Կոտրավող իրանով, որոցքի պես որոր
Ու կատվի քայլերով փափկանուրբ ու յերկշտ,
Նա գալիս ես բազմում նրա մոտ:

...Բաբախում ես ուժգին կրծքում սիրտն աղջկա,
Ու խաղում ես լեզուն բերանում իր անբան,
Յեվ դիմում ես իսկույն ջահելին մերձակա—
— Կարելի՞ յե,

Ընկեր, յես հարցնեմ եմ ձեզ մի բան...

...Պատասխան դեռ չկա... մտածում ես տղան.

Գեղեցիկ ես, գիտե՞ս, նոր աղջիկն այս անկող,
Չգիտե՞ս, ընկերել կարելի՞ յե նրան...

Սիրտն ասում ես—

Այո,

Կամքն ասում ես—

Վոչ...

Հրահրում ես սրտում տաք արյան տեղ—կրակ,
Ջրանցքներ են դառնում յերակները զվարթ,
Դեմառդեմ են յեղնում յերկու յերգ հակառակ,
Մարտնչում յերկու ձայն, յերկու կյանք,
Յերկու մարդ:

Յեվ կիտվում են հոնքերը ամպերի պես կուտակ,
Յեվ շանթում այնտեղից կայծակներն աչքերի,

Յեվ շուրթերը հնչում վորտի պես հաստատ.

— Ինձ ընկեր դուք լինել

Չեք կարող,

Չեք լինի:

Կծկվում ես անձուկ տխրած սիրտն որիորդի,

Թշնամի յե զգում այն տղին անծանոթ,

Համարում ես վարմունքը նրա տմարդի,

Ու ձայնով հիվանդի շշնջում—

— Անամոթ:

Բարձրանում ես տեղից այն տղան արիակամ
Ու փնտրող աչքերով նա դիտում ես ուրախ...
Հանդիպում ես հանկարծ մի զվարթ աղջկա,
Վոր ժպտում ես իրան վոնց վառվող մի քուրա:

Հասարակ ու շատ պարզ շրջագրեստ ես հագել,
Վառ հայացքը մայիս ես կյանքով հիացող,
Աշխատանքն այտերին յերկու վարդ ես վառել,
Իսկ քրտինքը նրանց լվացել, ինչպես ցող:

Ու թվում ես նրան բարեկամն ես ժպտում,
Այն ծանոթն ես վառել հուր հայացքն իր արև,
Մի նոր ույժ զգալով փոթորկվող իր սրտում,
Ակամա բերանից հենց թոցնում ես—

— Բարե՛վ:

Այդ բարեն անցնելով տրամվայի շոխողին,
Շառաչում ես վոնց ուռմբ արձակած նրա դեմ,
Խլացնում ես վոնց քար ականջներն որիորդի
Ու անճար խոսեցնում—

— Հեռանամ ո՛հ, արդեն:

ՉՄՈՒՆ ԳԻՂԵՐԸ

Քաղաքում թանձրանում է մշուշը,
Գունատվում են լույսերը վարար,
Բարձրանում, պտտվում է չար բուքը
Շուրջ պարի բռնելով խելագար:
Սուր քամին փողոցում արշավում է,
Լույս շուշան է ցանում ամեն դին,
Վոնց շշակ նա ճչում ու սուլում է,
Ջյան ուռմբեր է դարկում լուսամտին...

Ակմբում ինչպես տաք ու զմայլիչ է,
Յնուեն գործը վառում է քուրա,
Շախմատի դանդաղ քայլն ինչ գերիչ է,
Միշտ խաղում, ծիծաղում ենք ուրախ:
Արձակում է ուղիղն հնչուն ճիչը,
Կարկաչում ջրանցքի պես անուշ,
Ձեկուցողը հուզում է դահլիճը—
«Կենդանի յե Լենինը մեզնում»:

«Մենք հողին ենք հանձնել լուկ դիակը,
Միտքն ապրում է կյանքի շառաչում,
Ամեն մեկ դիլ կանչող նոր շշակը
Լենինյան գոռ լեզուն է հնչում...»:
Իսկ այնտեղ ի՞նչ է հողին իր վոռնոցը
Յերկարում գազազած վոնց գազան,
Չգիտե՞ վայրենին—մեծ փողոց է,
Անիմատ է այնտեղ վզվզալ...

— Մենք ճեղքել ենք, քամի, լեռ-սարերը,
Հորդ ջրերը շարժել նոր հունով,

Յեվ յեկել է քո հերթը, հասել է,
Կխոսենք մենք քեզ հետ ել շուտով...
Ու վորքան էլ վոռնում է բորանը,
Վոլորում իր պտույտը խելառ—
Նոր դեմքեր են վառվում մեր դռանը,
Այն բուքից ել ուժգին ու համառ:

Դուրսը՝ ցուրտ, դուրսը ձյուն ու ձմեռ է,
Դուրսը բուքն է յերգում գալարուն,
Ներսը՝ հուր, ներսը վառ հրդեհել ենք
Մի չեղած, ծաղկազարդ նոր գարուն:

1929 թ.

Ա Ջ Ն Ա Ն Ը

Թե անցան կանաչներն այն սիրուն,
 Թե ընկան ծառերից տերևներ,
 Թե մեռան ծաղիկներն ել նաշխուն—
 Բայց ելի մեր սրտում կան հույզեր:

Թե յերկինքը մռայլ, անձրևող,
 Միշտ լացող, սգացող մի պառավ,
 Թե աշխարհը տխուր ու անշող,
 Դեղնագույն, դեղնադեմ մի նկար—

Բայց ելի մեր սրտում խնդություն,
 Բայց ելի մենք յերգում ենք, յերգում,
 Ո, տխրել, խորթ ե մեզ տխրություն,
 Մենք քայլում ենք հզոր մի յերթում:

Արշավում ե քամին սրընթաց,
 Արշավում ե ուժգին ու հնչում,
 Յեվ ինչպես մտերիմ զանգահար՝
 Մեզ դպրոց, մեզ բանֆակ ե կանչում:

Ու վառված մի գույնով՝ միշտ դեղին—
 Մեզ համար նա ակումբն ե բացում...
 Նա բերում ե մեր թարմ ուղեղին
 Նոր մտքեր, ժողովներ, զեկուցում:

Ո՛հ, ինչ լավ ե հիմա ակմբում,
 Մեր տկումբը՝ յերկրորդ բնություն,
 Լողունպները՝ մեզ ծառ, մեզ տերև,
 Մեր սրտի վառ յեռանդն ել՝ արև:

Ճչացե՛ք, կանչեցե՛ք շշակներ,

Մենք ունենք դեռ ուրիշ մի կոխով.
 Թե առաջ՝ միշտ հրացանն եր խոսում,
 Իսկ հիմա՝ մեքենան բազմանիվ:

Թե անցան կանաչներն այն սիրուն,
 Թե ընկան ծառերից տերևներ,
 Թե մեռան ծաղիկներն ել նաշխուն,
 Բայց ելի՝ աշխատանք ու հույզեր:

1927 թ.

ՆԵՐՐՈՂ ՀՈՈՄԻ ՊԱՊԻՆ

«Յետ տար քո խաչը...»

Գ. Կուրդիմյան

Գիտենք ինչու, Հոռմի պապ, սրտով տոչոր
 Ռադիոյի պես ձայնդ գցած աշխարհով մին,
 Աղոթքներդ դարձրած անեծք, թույն ու հաջող,
 Կատաղել ես դու մեր դեմ վոնց խենթ քամին:
 Սոսում ես դու մարդկանց մասին մեր լույս յերկրի,
 Թե մութ գոմում վոնց խոյ բայում ենք ու լալիս:
 Աստվածասեր քարոզներիդ վառ բուրվառից
 Զգում ենք մենք՝ Բազմի նավթի հոտ և գալիս:
 Դարեր, դարեր մարդու մտքի թռիչքն անսահմ
 Կաշկանդիլ և կրոնը ձեր ինչպես մշուշ,
 Ըմբոստ, քաղցած դասակարգին հալցրել սանձ,
 Միտքը անել չեղած դրախտի ծաղկով անուշ:
 Յեվ մենք հիմա մեր նոր յերկրում, այս աշխարհում
 Կառուցում ենք դրախտից ել լավ կյանք մի խնդուն,
 Այսպիսի կյանք դեռ չե. տեսել անցյալն անհուն,
 Այդ գոմի պես յերկրն և ձեր մութ, անխնդում:
 Կապիտալը ճոճում և քեզ վորպես մի սուր,
 Բայց չգիտես, վոր թուր ես դու ժանգոտ ու հին,
 Վոր կձարդվես մեր սրբերից կալժակասուր
 Յեվ բանակն իր կմատնվի հրին, մահին:
 Նոր խաչակրաց արշավանք ես կազմում այսօր,
 Արյունարբու, վոր աշխարհը արնով ներկես:
 Լոռում ենք մենք... բայց խոսում են ինչքան հզոր
 Տրակտորները, չչակներն ու մուրճերը վես:
 1930 թ.

Զ Ո Փ Ե Ր Ը

Յես մի հասարակ շոֆեր եմ խնդուն,
 Կեպիս հետ թեքած,
 Ղեկն ամուր բռնած,
 Հայացքս նետած փողոցի հեռուն՝
 Քչում եմ ավտոն բերկրանքով անծայր...
 Այս մեր քաղաքի կենտրոնից յեռուն
 Տանում եմ մարդկանց
 Եր ծայրից մյուս ծայր...
 Սրբնթաց, արագ քշելով ավտոն,
 Ունկնդրում եմ յես ավտոյի ձայնին:
 Վոնց հաբաղատ մոր քաղցրաձայն ուրոր,
 Փնրում և սիրտս այդ հոխոցն այնքան,
 Ինձ համար չկա
 Ուրիշ ավելի խնդալից մի յերգ,
 Ներդաշնակ համերգ,
 Նրա լեզվը քան:
 Արշավի ժամին՝
 Ավտոյի դիմաց մարդկանց տեսնելիս
 Յես սուկեցնում եմ սուլիչը սաստիկ
 Յեվ վայրկենապես համբան փոխելով,
 Քչում այլ կողմով:
 Զլինի հանկարծ
 Մեկը տակն ընկնի,
 Թեկուզ մեր վայնքի «չնչին» մի մարտիկ...
 Յեվ հանդիպելիս մյուս շոֆերներին
 Բարե եմ տալիս գլխի շարժումով
 Ու մշտադարձ ծաղում եմ նրանց

Գարնան կարոտով,
Վառ ամռան տապով,
Ինչպես սիրելի բարեկամներ:

Կանգառումներին,
Յերբ ժինչև մերժում լցվում են ավտոն՝
Չայնում եմ իսկույն այն մնացածներեց
Ինձ նման անգարդ բանվոր ընկերով:
— Ընկեր, ջան ընկեր, մոտս տեղ կանեմ,
Կնստեք թե վոչ...

...Իրիկնապահին,
Արևն ընկնելիս քաղաքի հետև՝
Հսկա քաղաքի
Յենող լույսերի ծովի հետ մեկտեղ,
Վառում եմ յես ել
Ավտոյի այն զույգ աչքերն ելքտրիկ.
Յեվ քանի ժամ ել
Առանց ձանձրույթի քշում եմ ելի.
Միշտ առաջվան պես՝
Զվարթ, յեռանդուն
Ու անհաջնելի:

1925 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնակենսագրություն	3
Կառուցողական	3
Յերգ Դոնի մասին	8
Ակումբը	10
Բացիկը	12
Քաղաքի յերգը	15
Յերգ իմ սիրած աղջկան	17
Աշուղ Ասո	19
Գրգանտի արակատորիստների յերգը	21
Խնդուն առավոտ	24
Անձանոթներ	26
Զմռան գիշերը	28
Աշնանը	30
Ներբող Հսոմի պապին	32
Շոֆերը	33

27. Ա. Մեմարզե.—Պորհրդների վերընտրութիւնների հիմնական խնդիրները	7
28. Պորհրդների վերընտրութիւնների գործնական խնդիրները	8
29. Ամրապնդիր խորհրդները (պիյեսա)	10
30. Ուսոխնով.—Կուլակութիւնի վերացումը և խորհրդների խնդիրները	7
31. Բոսգանջյան.—Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները	10
32. Կոսովյով.—Բոլշևիկյան յերկրորդ գարնան մարտական խնդիրները	5
33. Վոսկոյան.—1931 թ. գարնանացանի կամպանիայի գործնական խնդիրները	5
34. Նոր կենցաղի յերգեր	20
35. Առաք Լուսնեց.—Բանաստեղծութիւններ	20

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարիատի ասոցիացիայի անդամների գրվածքները
 2. Ինչպիս կազմակերպել խոշոր կոլեկտի անտեսութ. և նրա վաքչութիւնը—4-րդ պր.
 3. 16-րդ կուսնամագումարի արդյունքները
 4. Հյուսիսային Կովկասի հնգամակը.—արդյունաբերութիւնը
 5. Պողաբուծութիւնի կազմակերպումը կոլեկտում:
 6. Կերի հարցը և սիւսացումը
 7. Կենդանաբուծութիւնի ավագ բանվորների պարտականութիւնները
 8. Չեռնարկ ծխախոտագործութիւնի համար:
 9. Ճագարաբուծութիւնը
 10. Թռչնաբուծութիւնը
 11. Աշխատանքի կազմակերպումը յիվ յեկամտների բաժանումը կոլեկտում: Լավագոյն կոլեկտների փորձը Հյուս. Կովկասում:
 12. Տրանսպորտը և կալիչը. տեխնիկական ձեռնարկ:
 13. Կոմսոմոլը և կուսակցութիւնի խնդիրները
- «Իսկի» Ростови -Д., Буденовский пр., 60, Крайнациздат,

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ. 12470

	Արմ.
	2-334

ՀՀ Ազգային գրադարան



NL0333627

33505

ADM.

2-3349a